ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2300-Ա « 09 » հունիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 344-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2024 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» N 344-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում).

1. Հանձնարարել Որոշման հավելվածում նշված կազմակերպությունների տնօրեններին՝ եռամսյա ժամկետում կատարել Որոշմամբ սահմանված շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ամփոփել ներկայացված տեղեկատվությունը և արդյունքների մասին զեկուցել Երևանի քաղաքապետին:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի համապատասխան կազմակերպությունների տնօրենների և աշխատակազմի ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստի վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ